Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հուլիսի 14 -ի N 384 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԽՐԻՄՅԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է «Խրիմյան» թանգարանում կատարել հակահրդեհային համակարգի մոնտաժման աշխատանքներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
4.	Ծրագրի կատարողը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՎՀՀ 04703401
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, հոգևոր
6.	Ծրագրի բյուջեն	116.389.230 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	04 ապրիլ, 2018թ.- 31 դեկտեմբեր, 2020թ.

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Խրիմյան» թանգարանի հակահրդեհային համակարգի մոնտաժման աշխատանքներ: Կապալառուին հանձնարարվող աշխատանքների արժեքը, համաձայն հաստատված նախահաշվի, կազմում է 78.574.650 դրամ: Ինչպես նաև նախատեսվում է ներմուծում 34.424.600 դրամ: Աշխատանքներն իրականացվելու են «Էյ Ար-Այ ՍԻ Թի» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 04109976):
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Խրիմյան» թանգարանի հակահրդեհային համակարգի մոնտաժման աշխատանքներ: Կապալառուին հանձնարարվող աշխատանքների արժեքը, համաձայն հաստատված նախահաշվի, կազմում է 78.574.650 դրամ, ինչպես նաև նախատեսվում է ներմուծում 34.424.600 դրամ արժողությամբ նյութերի և սարքավորումների: Ընդհանուր գումարը կազմում է 116.389.230 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ